ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 343 – Ա

«ՍԻՍԻԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՌԱՖԱՅԵԼ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՄԱՐԶԻՉ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 159-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռ. Այվազյանի 16.07.2026թ.-ի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. «Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռաֆայել Այվազյանին 2026 թվականի հուլիսի 25-ից օգոստոսի 21-ը ներառյալ տրամադրել

2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 24 աշխատանքային օր:

2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության բասկետբոլի մարզիչ Համբարձում Համբարձումյանին:

3. Ռաֆայել Այվազյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 22-ից:

Недействительная подпись

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Подписано: HARUTYUNYAN HAYK 1302840382

Մարզպետին փոխարինող Հ. Հարությունյան

2026թ. հուլիսի 16
Քաջարան